պատուական ի տան անմահ թագաւորին Յիսուսի. զոր Տէր Աստուած անփորձ և անսայթաքելի պահեսցէ զմեծութիւն ձեր մինչեւ ի խորին ծերութիւն, հանդարտ և խաղաղարար թագաւորութեամբ, ի հաճոյս բարերարին Աստուծոյ, ըստ մեծին Կոստանդիանոսի և Թէոդոսիցն. և յետ աստեացս վճարման՝ անմահ թագաւորութեան արժանի արասցէ, դասակցիլ ի կայանս Սրբոցն յարաղուարձ բերկրանաց և մշտակաց ուրախութեամբ, ի տեսութիւն փառացն Քրիստոսի. ամէն։

Եւ յետ սիրալիր ողջունական բանիցս, ծանիր ո՛վ ամենայաղթ թագաւոր, զի թագաւորք երեսփոխան են անմահ թագաւորին. և որպէս նա ծագէ զարեգակն իւր ի վերայ չարաց և բարեաց, և ածէ անձրև ի վերայ արդարոց և մեղաւորաց, այնպէս թագաւորք պարտին գորովագութ սիրով այցելու և խնամածու լինել ի վերայ ամենայն քրիստոնէից, ըստ ասելոյն Սողոմոնի. « Մի զրկեր զաղքատն՝ որ յեցեալ և յուսացեալ իցէ ի քեզ »։ Քանզի սակաւ ազգըս մեր՝ որ վասն աւերման աշխարհիս Հայոց և ալէկոծութեան՝ ցիր և ցան սփռեալ եղեն ընդ ամենայն երեսս երկրի, ոմանք առ Վիրս, ոմանք առ Խորին Պարսիկս, իսկ ոմանք յարևմուտս, նաև ի Միջագետս Ասորւոց, կան նշդեհացեալք և պանդխտացեալք։ Իսկ սակաւս ի բազմաց յազգէս մերմէ եղեն ընդ հովանեաւ թագաւորութեան ձերոյ, իբր աւանդ ինչ ի պատուական տեղւոջ՝ զգուշաբար շինեալք և պատուասիրեալք ի նախնեացն և ի խնամոց ձերոց մինչև ցայսօր։ Եւ մեր լսելով յարաժամ զնոցայն ապահովութիւն՝ և զշնորհակալութիւնն որ ի ձէնջ, գոհանամք զբարերարէն Աստուծոյ և մարդասիրէն, և փառս մատուցանեմք նմա, և յաղօթս հայցեմք միշտ՝ տալ երկարակեցութիւն ձերոց թագաւորութեանց։ Եւ զնոյն սէրն և զխնամքն՝ հայցեմք ի քէն, ո՛վ ծիրանածին մեծ բարեպաշտ Վլատիշլաւ թագաւորդ Լեհաց, պահել և ոչ նուազել. զի ամենայն թագաւորք երկրի տեսցեն զբարիոք խնամարկութիւնն որ ի վերայ նոցա, և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է. մինչև այց արասցէ Աստուած՝ մեզ, և դարձուսցէ զգերութիւնն Յակոբայ, և յիշեսցէ զդաշինքն զայն՝ զոր եդին մեծամեծ հայրապետքն և թագաւորքն մեր. այսինքն Սուրբն Սեղբեստրոս և Գրիգորիոս, Կոստանդիանոս և Տրդատիոս, և վասն հաստատագոյն մնալոյ ուխտին՝ զարիւն Կենարարին ի մեզան խառնեալ, նովիմբ գծագրեցին և հաստատեցին դաշինս։ Զնոյն սէրն հայցեմք ի Ձէնջ, և ոչ զանոտի հակառակաբանութիւն։

Զի սակաւ մի կարճ ի կարճոյ յուշ առնեմք քոյին սուրբ թագաւորութեանդ. զի եկն եհաս լուր ի լսելիս մեր վասն նեղութեան ազգին մերոյ՝ որ կան ընդ հովանեաւ Ձերում թագաւորութեանն, մանաւանդ ի մայրաքաղաքն Լեվ. թէ, զեկեղեցիս առեալ են բռնութեամբ ի ձեռաց ազգիս մերոյ, և քահանայք և ժողովուրդք շրջին իբրեւ զոչխարս մոլորեալս՝ որոց ոչ իցէ հովիւ. զոր ոչ կարեմ մի ըստ միոջէ յերկարել քո սուրբ թագաւորութեանդ, վասն ազէտից։ Եւ մեք յորմէ հետէ զայսպիսի իրս լսեալ եմք, կսկիծ և տրտմութիւն և նեղութիւն շատ ունիմք, քան զայս՝ որ յայլասեռիցս կու կրեմք։ Վասն որոյ